

«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական  
Աշխատողների մասնագիտական կարողությունների և  
Հմտությունների զարգացման »ծրագիր

## **ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

Թեմա՝ Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացումը  
Նախադպրոցական տարիքում

Դաստիարակ՝ Սիրանուշ Արզումանյան

Մանկապարտեզ՝ «Տավուշի մանկապարտեզ» ՀՈԱԿ

2022թ.

## Բովանդակություն

Ներածություն	3 էջ
Գլուխ 1 Մաթեմատիկական տարրական պատկերացումների զարգացումը 3-4 տարեկան կրտսեր երկրորդ խումբ	4 էջ
Գլուխ 2 Մաթեմատիկական տարրական պատկերացումների զարգացումը 4-5 տարեկան միջին խումբ	8 էջ
Գլուխ 3 I Ենթաթեմա Մաթեմատիկական տարրական պատկերացումների զարգացումը 5-6 տարեկան ավագ խումբ	10 էջ
2. II Ենթաթեմա Պարապմունքի պլան	14 էջ
3. Եզրակացություն	17 էջ
Գրականության ցանկ	18 էջ

## Ներածություն

Մաթեմատիկայի ուսուցումը մանկապարտեզում երեխաների իմացական ընդունակություններ, սիստեմատիկ, մտավոր զարգացմանը նպաստող գործընթաց է, որի ժամանակ երեխաներին հաղորդվում է գիտելիքների որոշակի համակարգ(Կրթական համալիր ծրագիր էջ 84):

Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացումը մեծ նշանակություն ունի նախադպրոցական տարիքի երեխաների կյանքում: Լ.Վ. Նշում է,որ տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման ժամանակ երեխան պետք է ընկալվի որպես նպատակասլաց,կազմակերպված,զարգացում ձեռք բերած անձ: Ա.Վ. Սպիտակը մաթեմատիկական զարգացման ներքո հասկանում էր նպատակային մեթոդական աշխատանքի հիմնական հատկությունները և որակների ձևավորումն ու զարգացումը:Մաթեմատիկական մտածողությունը յուրաքանչյուր երեխայի համար առավելագույն հնարավոր մակարդակի ստեղծումն է:

Ավագ նախադպրոցական տարիքի հիմնական խնդիրը ոչ այնքան մաթեմատիկական կարողությունների և հմտությունների զարգացման և երեխաների կողմից հստակ գիտելիքների որոշակի քանակի կուտակման և յուրացման համար պայմանների ստեղծումն է,որքան նրանց նախապատրաստումը այդ գիտելիքների ձեռքբերմանը:

Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման հիմնական նպատակն է նախադպրոցականին նախապատրաստել դպրոցին, սովորեցնել հաշվել, չափել, համեմատել,բացահայտել շրջապատող առարկաներ, մեծության հատկանիշներ, երկրաչափական պատկերներ և այլն:

Նպատակից բխում են հետևյալ խնդիրները`

1. Երեխաների մոտ տրամաբանական և մաթեմատիկական հասկացությունների զարգացում

2. Գաղափար առարկաների մաթեմատիկական հասկացությունների և հարաբերությունների մասին

3. Ճշգրիտ, հիմնավորված խոսքի մշակում

4. Երեխաների գործունեության և նախաձեռնողականության զարգացում

Աշխատանքի ընթացքում մեր վարկածն էր, եթե կարողանանք երեխաների մոտ զարգացնել մաթեմատիկական պատկերացումները, ապա մենք կարող ենք հասնել բավականին լավ արդյունքի (Ս.Ա. Չիբուխյան) Զ.Ս. Զարությունյան 2008թ.

2. Մաթեմատիկական պատկերացումների ձևավորման մեթոդիկա

Սույն աշխատանքը բաղկացած է ներածությունից, գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից:

«Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացումը» աշխատանքը բաղկացած է 18 էջից:

## ԳԼՈՒԽ I

### **ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ**

#### 3-4 տարեկան կրտսեր 2-րդ խումբ

Այս տարիքային խմբում «Մաթեմատիկական տարրական պատկերացումներ» ծրագրային բաղադրիչի նպատակներն են.

նպաստել իմացական գործընթացների, ճանաչողական հետաքրքրություններ զարգացմանը,

զարգացնել հաղորդակցական հմտությունները,

Հաղորդել մաթեմատիկական նախաթվային և թվային նախագիտելիքներ: Ծրագրային բաղադրիչն իր մեջ ընդգրկում է առարկաների մեծության, ձևի, քանակի, առարկաների միջև գոյություն ունեցող հիմնական տարածական, ժամանակային և քանակական հասկացությունների մասին տեղեկություններ:

Ծրագրային բաղադրիչն իր մեջ ներառում է հետևյալ բաժինները.

Նախաթվային՝

մեծություն

ձև

տարածության մեջ կողմնորոշում

ժամանակի մեջ կողմնորոշում

Թվային՝

քանակ

Ծրագրի յուրաքանչյուր բաժնում ընդգրկված են տարբեր բնույթի և բարդության ծրագրային խնդիրներ:

Խնդիրներն են՝

ձևավորել մաթեմատիկական տարրական նախաթվային պատկերացումներ՝ մեծություն, ձև և տարածության ու ժամանակի մեջ կողմնորոշում.

կարողանալ տարբերել և խմբավորել առարկաների խմբերն ըստ ընդհանուր հատկանիշների՝ գույնի, ձևի, չափի,

սովորեցնել կազմել միատեսակ առարկաների խմբեր, խմբից առանձնցնել մեկ առարկա

ձևավորել առարկաների 2 խմբերը համեմատելու հմտություն

ձևավորել տարածության և ժամանակի մեջ կողմնորոշվելու կարողություն

ձևավորել մաթեմատիկական տարրական թվային պատկերացումներ՝ քանակ

շրջապատում գտնել միատեսակ, շատ և մեկ առարկա

ձևավորել <<շատ>>,<<ոչ մի>> բառերի և <<որքա՞ն>> է հարցադրման իմաստը հասկանալու կարողություն,

ձևավորել դիդակտիկ նյութերով աշխատելու ցանկություն,

նպաստել ուսումնական գործընթացի նկատմամբ հետաքրքրության ձևավորմանը,

ստեղծել մաթեմատիկական տարրական պատկերացումների ձևավորման համար բարենպաստ պայմաններ,

զարգացնել երեխաների ինքնուրույն գործունեությունը

**Մեծություն(չափ)-**Սաներին ծանոթացնել <<մեծ>>,<<փոքր>>,<<հավասար>> հասկացություններին,տարբերել առարկաները ըստ չափի, մեծության: Տարբեր եղանակներով համեմատել 2 առարկա:

Առարկաների միջև հարաբերությունները ցույց տալու համար օգտագործել հետևյալ հասկացությունները.

մեծ, փոքր, չափով հավասար

երկար, կարճ, երկարությամբ հավասար,

լայն, նեղ, լայնությամբ հավասար

հաստ, բարակ, հաստությամբ հավասար:

**Երկարություն-** Ծանոթացնել <<երկար>>,<<կարճ>>, <<երկարությամբ հավասար>> հասկացություններին: Տարբեր եղանակներով համեմատել 2 առարկաների երկարությունը:

**Բարձրություն-** Ծանոթացնել <<բարձր>>,<<ցածր>>,<<բարձրությամբ հավասար>> հասկացություններին:Տարբեր եղանակներով համեմատել 2 առարկաների բարձրությունը:

**Լայնություն-** Ծանոթացնել <<լայն>>,<<նեղ>>,<<լայնությամբ հավասար>> հասկացություններին: Տարբեր եղանակներով համեմատել 2 առարկաների լայնությունը:

**Հաստություն-** Ծանոթացնել <<հաստ>>,<<բարակ>>,<<հաստությամբ հավասար>> հասկացություններին: Տարբեր եղանակներով համեմատել 2 առարկաների հաստությունը:

**Ձև-** ձևավորել տարրական պատկերացումներ երկրաչափական մարմինների և պատկերների մասին՝ խորանարդ, գունդ, բուրգ, քառակուսի, եռանկյուն և շրջան:

**Տարածության մեջ կողմնորոշում-**Սաներին ծանոթացնել տարածական հիմնական հասկացություններին՝ կողմնորոշվելով սեփական մարմնի դիրքով՝ աջ, ձախ, վերև, ներքև, առաջ, հետ, հեռու, մոտ, վրա, տակ:

**Ժամանակի մեջ կողմնորոշում-** Երեխաներին ծանոթացնել օրվա <<առավոտ>>,<<կեսօր>>,<<երեկո>>,<<գիշեր>> մասերին:

Քանակ-Տարիքային այս խմբում մաթեմատիկական տարրական պատկերացումների զարգացման աշխատանքներն ուղղված են բազմությունների համեմատմանը, համադրմանը, խմբավորմանը՝ օգտագործելով <<շատ է>>,<<քիչ է>>, <<այնքան,որքան>> արտահայտությունները:

Միատեսակ և տարբեր առարկաներից կազմել խմբեր:Տարբերել <<շատ>>,<<մեկ>> <<ոչ մի>>, բառերի իմաստը:Պատասխանելիս օգտվել համապատասխան բառերից, հասկանալ <<որքա՞ն է>> հարցադրման իմաստը: Շրջապատում գտնել միատեսակ, շատ և մեկ առարկա (ԿԳՄՄՆ կողմից հաստատված կրթական համալիր ծրագիր):

## ԳԼՈՒԽ II

### ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՉԱՐԳԱՑՈՒՄԸ

#### 4-5 տարեկան միջին խումբ

Այս տարիքային խմբի պահանջներից բխող սկզբունքները ապահովում են ինչպես հոգեկան գործընթացների, այնպես էլ նախադպրոցականին հասանելի նախաթվային և թվային պատկերացումների զարգացումը:

Մաթեմատիկական տարրական պատկերացումների ձևավորումը միջին տարիքային խմբում սաների մտավոր զարգացմանը նպաստող գործընթաց է, որը նպատակաուղղված է՝

1.Նպաստելու իմացական գործընթացների ճանաչողական հետաքրքրության զարգացմանը

2.Խթանելու հաղորդակցական հմտությունների

3.Նպաստելու անձնային որակների ձևավորումն ու զարգացումը

Ծրագիրն իր մեջ ներառում է հետևյալ բաժինները

Նախաթվային՝

մեծություն

ձև

տարածության մեջ կողմնորոշում

Թվային՝

քանակ և հաշիվ

Մեծություն՝ երկարություն-ամրապնդել <<երկար>>, <<կարճ>>, <<հավասար>> արտահայտություններին



Բարձրություն - <<բարձր>>,<<ցածր>>,<<բարձրությամբ հավասար>> հասկացություններ  
Լայնություն-<<լայն>>,<<նեղ>>,<<լայնությամբ հավասար>> հասկացությունները

Հաստություն - <<հաստ>>,<<բարակ>>,<<հաստությամբ հավասար>> հասկացություններ  
Ձև-ձևավորել տարրական պատկերացումներ երկրաչափական մարմինների և  
պատկերների մասին՝ խորանարդ, գունդ, բուրգ, գլան, քառակուսի, եռանկյուն,  
շրջան,ողղանկյուն:

Տարածության մեջ կողմնորոշում- ամրապնդել տարածական հիմնական  
հասկացությունների մասին սաներիունեցած պատկերացումները՝ կողմնորոշվելով սեփա-  
կան մարմնի դիրքով աջ, ձախ, վերև, ներքև, հետ, առաջ, հեռու, մոտ, վրա, տակ, ներս,  
դուրս:

Ժամանակի մեջ կողմնորոշում-Սաներին ծանոթացնել օրվա մասերին՝ առավոտ, կեսօր,  
երեկո և գիշեր:

Թվային-ձևավորել պատկերացումներ 1-5 թվերի վերաբերյալ,տալ պատկերացումներ,որ  
յուրաքանչյուր թիվ ունի մեկ հաջորդ թիվ և մեկ նախորդ թիվ,ծանոթացնել մինչև 5թվի  
կազմությանը

Խնդիրներն են՝

ձևավորել մաթեմատիկական նախագտելիքներ՝ նախաթվային և թվային,

զարգացնել մտավոր գործողություններ կատարելու կարողություններ՝ համեմատում,  
խմբավորում, համակարգում, համադրում,

ծանոթացնել 1-5 թվանշաններին,

սովորեցնել առանձին տարրերից ստանալ թվի կազմություն.Օրինակ՝5-ը 1,1,1,1 և նորից 1  
Է,կամ 3 և 2,4 և 1:

ձևավորել երկրաչափական մարմինների և պատկերների վերաբերյալ պատկերացումներ

մշակել տարածության և ժամանակի մեջ կողմնորոշվելու կարողություններ

ձևավորել համատեղ գործունեություն ծավալելու կարողություն

զարգացնել տարբեր նյութերով աշխատելու կարողություն

ստեղծել նպաստավոր պայմանների ինքնուրույն գործունեության զարգացման համար:

Յուրաքանչյուր բաժնում ընդգրկվում են տարբեր բնույթի և բարդության առաջադրանքներ, որոնք ուսուցանվում են պարզից բարդ սկզբունքով և ամրապնդվում առօրյայում՝ իրենց շրջապատող ծանոթ առարկաների վերաբերյալ բազմաբովանդակ, մատչելի, հրապուրիչ վարժությունների, խաղային բնույթի պարապմունքների օգնությամբ

### **ԳԼՈՒԽ III**

#### **I ԵՆԹԱԹԵՄԱ**

#### **ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԾՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ**

##### **5-6 տարեկան ավագ խումբ**

Տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորման և զարգացման միջոցներ են՝ մաթեմատիկայի պարապմունքները դիդակտիկ, զարգացնող, մրցակցային, ինտելեկտուալ, խաղերը, էքսկուրսիաները, պարապմունքների զանազան տեսակների կապերը: Ձևավորվում են քանակական պատկերացումները, երկրաչափական պատկերների և մարմինների վերաբերյալ պատկերացումները տարածության, ժամանակի առանձնահատկությունները (դաստիարակի ուղեցույց 2011)

«Մաթեմատիկական տարրական պատկերացումներ» ծրագրային բաղադրիչը նպատակաուղղված է 5-6 տարեկան սաների մտավոր զարգացմանը, մաթեմատիկական տարրական գիտելիքերի ձեռքբերմանը, իմացական գործընթացների՝ հիշողության, ուշադրության, տրամաբանության ձևավորմանը, կենտրոնանալու կարողության զարգացմանը ինչպես նաև մեծահասակների և հասակակիցների հետ ճիշտ հարաբերությունների ձևավորմանը:

Ծրագրային բաղադրիչը ներառում է հետևյալ բաժինները՝

Նախաթվային՝

մեծություն,

ձև,

տարածության մեջ կողմնորոշում,

ժամանակի մեջ կողմնորոշում

Թվային

քանակ և հաշիվ,

Ծրագրի յուրաքանչյուր բաժնում ընդգրկված են տարբեր բնույթի և բարդության ծրագրային խնդիրներ:

Մաթեմատիկական տարրական պատկերացումներ բաժնի խնդիրներն են՝

ձևավորել դրական վերաբերմունք և հետաքրքրություն մաթեմատիկայի նկատմամբ,

ստեղծել անհրաժեշտ զարգացնող միջավայր և բարենպաստ պայմաններ,

խթանել երեխաների ինքնուրույն գործունեությունը,

ամրապնդել նախաթվային հասկացությունները,

խորացնել առարկաները ըստ իրենց հատկությունների համեմատել կարողությունը՝ ըստ չափի, ձևի, գույնի,

ընդլայնել երկրաչափական մարմինների և պատկերների վերաբերյալ նախագիտելիքներ,

սովորեցնել ճանաչել թվանշանները և տարբերակել թիվ ու թվանշան հասկացությունները,

ձևավորել պատկերացումներ տարածության և ժամանակի մեջ կողմնորոշման վերաբերյալ,

սովորեցնել կատարել 1-10-ի սահմանում ուղիղ և հետ հաշիվ,

ծանոթացնել թվի միավոր կազմին,

ձևավորել պատկերացում նախորդ, հաջորդ հասկացությունների վերաբերյալ,

ծանոթացնել կարգային հաշվին,

ծանոթացնել թվաբանական գործողությունների նշաններին (+, -, =) և համեմատության նշաններին (>, <, =),

սովորեցնել կատարել պարզ մաթեմատիկական գործողություններ և լուծել պարզ խնդիրներ

սովորեցնել տարբերակել մաս և ամբողջ հասկացությունները, մասերից ստանալ ամբողջ և ամբողջը բաժանել մասերի:

նպաստել ուսումնական գործընթացի նկատմամբ հետաքրքրության ձևավորմանը,

ստեղծել մաթեմատիկական տարրական պատկերացումների ձևավորման համար բարենպաստ պայմաններ,

զարգացնել սաների ինքնուրույն գործունեությունը:

Մեծություն- Ամրապնդել մեծ-փոքր, հաստ-բարակ, երկար-կարճ, լայն-նեղ, բարձր-ցած հասկացությունները:

Պայմանական չափիչների օգնությամբ որոշել առարկայի մեծությունը, երկարությունը, լայնությունը, բարձրությունը, հաստությունը, ինչպես նաև հեղուկ և սորուն մարմինների չափը:

Երկարություն - համեմատել ըստ երկարության՝ երկար-կարճ, հավասար:

Բարձրության - համեմատել առարկաներն ըստ բարձրության՝ բարձր-ցածր, հավասար,

Լայնություն - համեմատել առարկաներն ըստ լայնության՝ լայն-նեղ, հավասար,

Հաստություն - համեմատել առարկաները ըստ հաստության՝ հաստ-բարակ, հավասար,

Ձև- ճանաչել, տարբերել և անվանել երկրաչափական մարմիններն ու պատկերները՝ գունդ, խորանարդ, գլան, կոն, բուրգ, շրջան, ձվածիր, եռանկյուն, քառակուսի, ուղ- դանկյուն, բազմանկյուն:

Կողմնորոշում տարածության մեջ - Ամրապնդել և խորացնել տարածական պատկերացումները (ձախ, աջ, վերև, ներքև, առջև, հետև, հեռու, մոտ, մեջտեղ, վրա, տակ, ներս, դուրս):

Կողմնորոշում ժամանակի մեջ- Ամրապնդել օրվա տարբեր ժամանակահատվածների՝ առավոտ, կեսօր, երեկո, գիշեր, շաբաթվա օրերի, տարվա եղանակների և ամիսների անվանումների մասին պատկերացումները:

Քանակ և հաշիվ

սովորեցնել կատարել քանակական ուղիղ և հետընթաց, տարբեր զգայարաններով համրանք 10-ի սահմանում.

սովորեցնել կատարել նշված թվից համրանք ինչպես ուղիղ, այնպես էլ՝ հետ, միջակայքային (ինտերվալային) համրանք՝ կոնկրետ երկու թվերի սահմանում՝ 2- 7, 5-9, 6-10, 10-7, 9-4 և այլն,

սովորեցնել տիրապետել կարգային, դասական համրանքի կարողություններին

/պատասխանել ո՞ր, ո՞րերորդ հարցերին/,

որոշել առարկայի դիրքը շարքում

զարգացնել նախորդ և հաջորդ թվերի հարաբերությունները հասկանալու կարողությունը, սովորեցնել գտնել յուրաքանչյուր թվի նախորդը և հաջորդը,

հաշվելիս թիվը հարաբերակցել հաշված առարկաների անվան հետ ( 1,2,3,4 - ընդամենը՝ 4 արքադադ),

հասկանալ թվի անկախությունը առարկաների ձևից, գույնից, տեսակից, չափ- սից, գրաված դիրքից, տարածությունից և հաշվելու ուղղություններից,

ճանաչել 1-9 թվանշանները, թվաբանական գործողության նշանները (-, + ,= ),

համեմատության նշաններ (<, >, =) և կատարել թվաբանական գործողություններ, թվի կազմության ձևերը /առանձին տարրերով՝ 5-ը կազմված է 1.1.1.1 և նորից մեկ և 1 և այլն/,

բաժանել առարկան 2 և 4 հավասար և անհավասար մասերի և մասերից ստա- նալ ամբողջը(ԿԳՄՍՆ կողմից հաստատված կրթական համալիր ծրագիր):

## II Ենթաթեմա

### Պարապմունքի պլան

Ավագ նախադպրոցականի տարրական մաթեմատիկական զարգացումը ուսումնասիրելու համար ավագ խմբում անցկացվեց հերթական պարապմունքը, որը իր բնույթով ինտեգրված էր՝ մաթեմատիկա, ինձ շրջապատող աշխարհը, նկարչություն: Թեման երկրաչափական պատկերներն էին, պարապմունքի տևողությունը 1 պարապմունք: Պարապմունքն անց էր կացվում շատ անկաշկանդ մթնոլորտում, ներկա էին նաև տնօրենը, միջին խմբի դաստիարակը, դաստիարակի օգնականը, երաժիշտը: Պարապմունքի նպատակն էր.

1. կարողանան ճանաչել և անվանել 5 երկրաչափական պատկեր
2. կարողանան տարբերել ըստ իրենց բնորոշ առանձնահատկությունների
3. ստանան նոր պատկերներ տարբեր երկրաչափական պատկերներից

Երեխաներին տրվել էր անհրաժե՛տ բոլոր նյութերը: Պարապմունքին ներկա էին խմբի բոլոր երեխաները: Սկզբում՝ խթանման փուլում, ոչ բոլոր երեխաներն էին ընդգրկված պարապմունքի մեջ: Նրանցից 3-ը ուշադիր չէին, թե ինչ հարց է հնչել: Իսկ հարցը հետևյալն էր՝ ինչպիսի երկրաչափական պատկերներ գիտեն: Մի քանի երեխա առանց վարանելու տվեցին հարցի սպառնիչ պատասխանը՝ այն է թվարկեցին իրենց իմացած երկրաչափական պատկերները:

Իմաստի ընկալման փուլում ներգրավվեցին բոլոր երեխաները: Գրատախտակին փակցված էին 5 երկրաչափական պատկերներ՝ քառակուսի, շրջան, ուղղանկյուն,

եռանկյուն, ձվածիր: Երեխաները հերթականությամբ անվանում և բարձրացնում էին համապատասխան երկրաչափական պատկերը: Այստեղ երեխաները ինդիր չունեցան, բոլորը կարողացան ճիշտ արձագանքել, միայն 2 երեխա դանդաղ էին մտածում, բայց արդյունքում՝ ճիշտ կողմնորոշվում: Երեխաներին առաջարկվեց համեմատել շրջանի և քառակուսու կողմերը: Երեխաները պատկերները իրար վրա դնելով համեմատեցին, նշեցին քառակուսու կողմերն ու գագաթները և հանգեցին նրան, որ քառակուսին ունի 4 կողմ և 4 գագաթ, իսկ շրջանը՝ ոչ: Նույն կերպ համեմատեցին նաև մնացած պատկերները:

Այնուհետև երեխաները բաժանվեցին խմբերի և տեղափոխվեցին աշխատանքային կենտրոններ: Նրանց առջև դրվեց A4-ի վրա ուրվագծված երկրաչափական պատկերներ: Երեխաներին հանձնարարվեց նշված երկրաչափական պատկերներից ստանալ նոր առարկաներ, որոնք կան մեր շրջապատում: Երեխաներն աշխատեցին մեծ ոգևորությամբ, քանի որ յուրաքանչյուր պատկեր ստանալուց հետո նրանց մեջ մեծ ուրախություն էր տիրում: Նրանք շրջանից ստացան գնդակ, գլոբուս, նարինջ, ձմերուկ, քառակուսուց՝ սեղան, գիրք, ուղղանկյունից՝ պահարան, եռանկյունուց՝ կոն, ձվածիրից՝ զատիկ:

Իմաստի ընկալման փուլից հետո երեխաներին առաջարկվեց ֆիզկուլտդադար: Գետնին դրվել էին մեծ երկրաչափական պատկերներ, իսկ երեխաների ձեռքին 1-ական փոքր պատկերներ: Խաղը կոչվում էր <<երկրաչափական պատկերը կորցրել է իր տունը>>: Հրահանգից հետո երեխաները վազում էին և կանգնում այն պատկերի վրա, որից որ կար իրենց ձեռքին: Կանգնելուց հետո նաև համեմատում էին՝ նշում որն է մեծ: Ֆիզկուլտդադարի ժամանակ բոլոր երեխաները ակտիվ էին և արագ կողմնորոշվում էին: Կշռադատման փուլում երեխաներին տրվեց հարց, թե ինչ սովորեցին, ինչն էր հետաքրքիր, ինչ բացահայտումներ արեցին: Երեխաները տվեցին հարցերին ճշգրիտ պատասխաններ՝ այն է նշեցին երկրաչափական պատկերները, նրանց առանձնահատկությունները

(անկյուն ունեցող և անկյուն չունեցող): Նրանց համար շատ հետաքրքիր էր երկրաչափական պատկերներից նոր առարկաներ ստանալը:

Պարապմունքն անցավ հետաքրքիր, որի ժամանակ երեխաներն իրենց զգում էին շատ ազատ, քանի որ աշխատում էին անկաշկանդ մթնոլորտում, երբեմն իրենք դառնում էին ստեղծագործ՝ ուրվագծված երկրաչափական պատկերների վրա նոր առարկաներ ստանալով: Պարապմունքի ընթացքում զարգացավ նրանց ճիշտ կողմնորոշվելու և արագ

արձագանքելու կարողությունները: Պարապմունքի ժամանակ ստացած գիտելիքների

հիման վրա ամրապնդվեց երեխաների երկրաչափական պատկերները տարբերելու և դասակարգելու, շրջապատում տարբեր երկրաչափական պատկերները ըստ իրենց բնորոշ առանձնահատկությունների հայտնաբերելու և համեմատելու կարողությունները:

Պարապմունքի արդյունքներից գոհ եղան հաստատության այն աշխատակիցները, ովքեր ներկա էին պարապմունքի ողջ ընթացքին: Միայն երաժշտության դաստիարակը նշեց, որ կարելի էր ֆիզկուլտդպարը զուգակցել երաժշտության հետ: Հատկապես տնօրենը արտահայտեց իր գոհունակությունը, նշեց, որ պարապմունքի նպատակն ու վերջնարդյունքը գոհացուցիչ էին, նշեց, որ պարապմունքն անցկացնելիս դաստիարակը ազատ էր իր ընտրած մեթոդների հարցում և սահմանված ժամանակահատվածում, ինտեգրված պարապմունքին ներգրավելով բոլոր երեխաներին հասավ դրական արդյունքի, որովհետև ինտեգրված պարապմունքները հանդիսանում են որպես ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու միջոց:





## Եզրակացություն

Չետագոտությունից հետո ես ինձ համար կարևորեցի այն, որ շատ հետաքրքիր և բազմաբովանդակ աշխատանք է տարրական մաթեմատիկական գիտելիքների զարգացումը, քանի որ մաթեմատիկական որպես գիտություն բազմաբնույթ ու հետաքրքիր է: Իհարկե ուսուցիչների գործունեության ընդհանուր վերջնական արդյունքը կարելի է համարել կրթական հաստատության կրթական ծրագրով առաջադրված խնդիրների լուծումը: Դրան զուգահեռ շատ կարևոր է նաև աշխատակիցների համագործակցությունը, քանի որ թիմային աշխատանքը ևս արդյունքի հասնելու լավագույն միջոցն է:

Կատարելով իմ ուսումնասիրությունները և հաշվի առնելով այն հետաքրքիր պահերը, որ ես ունեցա հանգեցի նրան, որ տարրական մաթեմատիկական գիտելիքների զարգացումը ոչ միայն առարկաների, դրանց հարաբերակցության հատկանիշների, թվերի, երկրաչափական պատկերների և դրանց հետ կապված գործողությունների ուսումնասիրությունն է, այլև՝ միջոց երեխաների աշխարհընկալման համար:

## **Օգտագործված գրականության ցանկ**

Այլընտրանքային մոդելներով 5-6 տարեկան երեխաների Նախադպրոցական կրթության կազմակերպումը

Մաթեմատիկայի իմ այբուբենը (Ս.Ա. Չիբուխչյան, Յ.Ա. Հարությունյան)

Տանը և դպրոցում (2008թ.) Անահիտ Արնաուդյան, Գայանե Բեդիրյան)

Մանկապարտեզի միջին խմբի (4-5 տարեկանների կրթական համալիր ծրագիր)

Մանկապարտեզի ավագ խմբի (5-6 տարեկանների) կրթական համալիր ծրագիր

Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացման պարապմունքները մանկապարտեզի ավագ խմբում (Ա. Չիբուխչյան)

ԿԳՄՍՆ կողմից հաստատված Նախադպրոցական կրթական հիմնական ծրագիր (3-4 տարեկան կրտեր 2-րդ խումբ)

ԿԳՄՍՆ կողմից հաստատված Նախադպրոցական կրթական հիմնական ծրագիր (4-5 տարեկան միջին խումբ)

ԿԳՄՍՆ կողմից հաստատված Նախադպրոցական կրթական հիմնական ծրագիր (5-6 տարեկան ավագ խումբ)

